

ՍՈՒՏ ԿԸ ԽՕՍԻՊ
ՍՈՒՏ ՎԿԱՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Այս մէկը անաստուածաբար սուտ վկայութիւն ընողներուն համար է: Այս մասին Աստուած խօսելով Մովսէսի հետ, Օրէնքի մէջ գրեց. «Սուտ մի՛ վկայեր» (Ելք. Ի. 13), ինչ որ մեծ անօրէնութիւն է:


Առաջին՝ ահեղ ու սուկալի իրողութիւնը այն է, որ ճշմարտութիւնը Աստուծոյ անունն է եւ ամէն բանի զարդն ու աշխարհի պայծառութիւնն է: Սուտ վկան աւերիչ ու կործանիչ է ճշմարտութեան, որովհետեւ կը վկայէ ո՛չ իր տեսածին եւ ո՛չ ալ գիտցածին մասին:

Երկրորդ, ուրիշներու մեղքերու ընկեր կ'ըլլայ եւ զանոնք կը հաստատէ իրենց գործած մեղքին ու չարիքին մէջ եւ ինք սատանային բնակարանը կ'ըլլայ, ինչպէս Տէրը ըսաւ. «Ան, որ սուտ խօսի, ինքն իրմէ կը խօսի սուտը»: «Ինքն իրմէ»-ն այն է, որպէս թէ Աստուած կ'ըսէ. «Սուտը իմս չէ, այլ՝ սատանային, եւ սատանան է անոր հայրը, որ ծնաւ սուտը» (Յովհ. Ը. 44) եւ ամէն սուտ վկայ մասնակից է սատանային:

Բոլոր ստախօսները եթէ ետ չդառնան ու չապաշխարեն, սատանային հետ տանջանքի եւ կորուստի պիտի մատնուին, համաձայն այն խօսքին, թէ «Տէրը կը կորսնցնէ բոլոր սուտ խօսողները» (Մղ. Ե.7): Ճշմարտախօս բերանը Ս. Հոգիին դուռն է, իսկ ստախօս բերանը դժոխքի դուռն է եւ դեւերու մուտք: Հետեւաբար, ձեր բերանը ճշմարտութեան վարժեցուցէք, որպէսզի Ս. Հոգին բնակի ձեր մէջ:

Յովհաննէս Երզնկացի

ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ
Ս. ՊԱՏԱՐԱԳ



ՊԼՏՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՀԱՎՏԱՏՈՒՄԸ
2.- Պատրաստութիւն ընծաներուն
Բ.- ՃԱՇՈՒ ՊԱՇՏՈՆ

Մեծ Խորհուրդի հոգեւոր պատրաստութեան այս ընթացքին մէջ, հաւատացեալներ պարտին իրենց ուղղափառ դաւանութիւնը խոստովանիլ՝ հաւատոյ հանգանակը արտասանել, եւ ահաւսիկ ողջ եկեղեցին կ'արձագանգէ Նիկիական Հանգանակը որ կու գայ հաստատ կերպով դրսեւորելու հաւատացեալներուն հաւատքը Քրիստոսի Աստուածութեան եւ անոր վախճանական նպատակին:

Հաւատամքէն ետք, սարկաւազը Հայ Եկեղեցւոյ դիրքորոշումը կը բանաձեւէ, որպէս նզովք բոլոր անոնց՝ որոնք թիր վարդապետութեամբ շեղած են ուղղափառ հաւատքէն, եւ որուն կը յաջորդէ Հայ բազմաչարչար հայրապետին փառաբանական օրհնութիւնը.- ...

Շարունակելի



ՔՈՒ ԽՕՍԵՂ ԽՆ ՈՏՔԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՆ ՇԱԽԻՆՇԵՐՈՒՄ ԼՈՅՍ (ՍՂ.119.105)

ՃԷ. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 28 ԱՊՐԻԼ 2024

ԹԻՒ 17

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՆՉՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Գրծ. 17. 1-15: Ա. Յհ. 1-10: Յհ. 7. 14-24:

(ՏՕՆ ԵՐԵՄՅԱՆ ՍՈՒՐԲ ԽԱԶԻՆ)

ՅԻՍՈՒ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՄԵՏԱՐԱՆԸ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՈՒ 7. 14-24

Տաղաւարահարաց տօնակատարութեան մօտաւորապէս կէսին, Յիսուս տաճար ելաւ եւ սկսաւ ուսուցանել: Հրեաները կը զարմանային եւ կ'ըսէին. «Ինչպէ՞ս այս մարդը Սուրբ Գիրքերը գիտէ, երբ բնաւ չէ ուսած զանոնք»:

Յիսուս պատասխանեց անոնց. «Ինչ, որ ձեզի կ'ուսուցանեմ՝ իմ վարդապետութիւնս չէ, այլ՝ անոր որ գիտ զրկեց: Ով որ կ'ուզէ Աստուծոյ կամքը կատարել, պիտի հասկնայ թէ Աստուծմէ՞ է այս վարդապետութիւնը, թէ ես ի՛մ հեղինակութեամբս կը խօսիմ: Ան, որ իր հեղինակութեամբ կը խօսի՝ իր անձին համար փառք կը փնտռէ, իսկ ան, որ զինք զրկողին փառքը կը փնտռէ՝ նշմարիտ է եւ իաբէութիւն չկայ անոր մէջ: Մովսէս ձեզի Օրէնքը չտուա՞ւ: Սակայն ձեզմէ ոչ ոք կը հնազանդի Օրէնքին: Ինչո՞ւ կ'ուզէք զիս սպաննել»:

Ժողովուրդը պատասխանեց. «Իւրաքանչիւր ես, ի՞նչ ես: Ո՞վ կ'ուզէ բեզ սպաննել»:
Յիսուս պատասխանեց. «Հրաշք մը գործեցի եւ բոլորդ վրդովեք էք: Մովսէս հրահանգեց թլփատել ձեր գաւակները – թէեւ Մովսէս չէր սկսողը, այլ՝ ձեր նախահայրերը – եւ դուք ձեր գաւակները կը թլփատէք Շաբաթ օրով: Եթէ մէկը կը թլփատէք Շաբաթ օրով, որպէսզի չբեկանուի Մովսէսի Օրէնքը, ինչո՞ւ գայրացած էք ինծի դէմ, որովհետեւ մէկը ամբողջութեամբ բժշկեցի Շաբաթ օրով: Երեւոյթներէն մի՛ դատէք, այլ արդար դատաստան կատարեցէ՛ք»:

ԱՍՏՈՒԾՈՅ ՎՍՏԱՀՈՂԸ՝ ԻՐ ՍԻՐՏԸ ԹՈՂ ԱՆՈՐ ՅԱՆՁՆԷ

Աստուծոյ հետաքրքրութեան առարկան մեր գրպանները չեն, այլ՝ մեր սիրտն ու անոր ամբողջ սէրն է: Ան մեզմէ գործ ու աշխատանք պահանջել առաջ, կամեցողութիւն եւ պատրաստակամութիւն կը պահանջէ: Մեր կարողութիւնները իր տրամադրութեան ներքեւ դնելէ առաջ, նախ մեր անձերը դնենք: Մեր ունեցածը Աստուծոյ վստահիլը լաւ բան է, բայց մեր անձերը անոր վստահիլը գերազանցօրէն լաւ է: Աստուծոյ վստահող մարդը չի կրնար ինքզինք չյանձնել Աստուծոյ: Իսկ ինքզինք Աստուծոյ յանձնող մարդը՝ պէտք է յանձնէ նաեւ իր ամբողջ սիրտն ու սրտին կրակը, հոգին ու հոգեբը, միտքն ու մտորումները, փափաքն ու փառքը: Ահա ա՛յս ձեւով է, որ Աստուած կը մեծարուի:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԵՐԵՒՄԱՆ Ա. ԽԱԶԻ

Յինանց հինգերորդ Կիրակին կը կոչ-
ւի Երեւման խաչ եւ յիշատակն է Երու-
սաղէմ՝ խաչի նշանի երեւումին:

7 Մայիս, 351 թուին, Կիւրեղ Երու-
սաղէմացի հայրապետի ժամանակ, Ե-
րուսաղէմի մէջ օր ցերեկով, երկինքի
վրայ կ'երեւի խաչի նշանը, Գողգոթայէն
մինչեւ Զիթենաց լեռը: Լուսապայծառ
խաչի նշանը կ'երեւի բոլորին: Ի տես
գարմանահրաշ այս երեւոյթին, ժողո-
վուրդն ու եկեղեցականները եկեղեցի կը
մտնեն Աստուծոյ գոհութիւն եւ փառք
մատուցանելու համար:

Կիւրեղ եպիսկոպոսը գարմանահր-
րաշ այս դէպքը կը տեղեկացնէ Բիւ-
զանդիոնի Կոստանդիանոս Կայսեր, եւ
անոր կը խրատուէ քրիստոնէական իր
ամուր հաւատքին համար: Կիւրեղ
հայրապետի վերոյիշեալ գրութիւնը
թարգմանուած է հայերէնի եւ կ'ընթեր-
ցուի Երեւման Խաչի տօնի օրը:

Երեւման Խաչի սրբոյ տօնը յատուկ է
միայն հայերուն եւ յոյներուն: Կաթողիկ
եկեղեցին այս անունով խաչի տօն չունի:

Երեւման խաչի տօնը յատուկ շա-
րական չունի, այլ՝ նոյն օրը կ'երգեն
խաչի միւս տօներու շարականները, ո-
րոնցմով կը փառաբանուի խաչը:

ԱՌԱՎ. ՉԼՈՒՍ ԺԵ. 10-12

Բարի մարդուն խրատը ընդու-
նելի է հարազատներուն համար, իսկ
անոնք, որ յանդիմանութեան չեն
հանդուրժեր՝ վարկաբեկիչ վախճան
պիտի ունենան:

Երբ մահն ու կորուստը յայտնի
են Տիրոջ, որքան եւս առաւել՝ մար-
դոց սրտերը:

Անուղիղ մարդը չի սիրեր զինք
յանդիմանողը եւ չի հաղորդակցի
գիտակից մարդուն հետ:

ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

ԸՆՏԱՆԻՔԻ ՄԸ ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆԸ ՈՒՐԿԷ՞ ԿԸ ԲԽԻ:

Ընտանիքի մը երջանկութիւնը կը
բխի այր եւ կնոջ փոխադարձ սերէն եւ
հաւատարմութենէն: Սիրոյ աղբիւրը
Աստուած է, քանզի «Աստուած սէր է,
եւ ան որ սիրոյ մէջ կը բնակի, Աս-
տուծոյ մէջ կը բնակի ու Աստուած՝ ա-
նոր մէջ» (Ա. Յովհ. Դ.16):

Առանց սիրոյ տիրապետութեան ըն-
տանիքի մը միութիւնը կը խախտի: Փո-
խադարձ սէրը վստահութիւն կը ներ-
շնչէ այր եւ կնոջ: Սիրոյ ներկայութեան
կ'անհետանան նախանձը, գոռոզու-
թիւնը, հպարտութիւնը, անվայել վար-
մունքը, անձնասիրութիւնը, գրգռու-
թիւնը, չարութիւնը եւ անիրաւութիւ-
նը: Սէր եղած տեղը կը գործնայ հա-
ւատքը եւ կը շողայ յոյսը՝ փոխադարձ
գիշտութեամբ, համբերութեամբ եւ եր-
կայնամտութեամբ (Ա. Կորթ. ԺԳ.4-7):
Սէրը կը ծածկէ մեղքերու բազմութիւնը
եւ կը դառնայ երաշխիք խաղաղութեան
(Ա. Պետ. Դ.8): Սիրոյ շնորհիւ կը
ծաղկի ընտանիքը եւ կը վայելէ Աս-
տուծոյ օրհնութիւնը:

Պօղոս առաքեալ եկեղեցիներուն
ուղղած իր թուղթերուն մէջ հաւա-
տացեալներուն կ'ըսէ. «Ձեր ամէն բա-
ները սիրով ըլլան» (Ա. Կորթ. ԺԶ.14):
«Սիրով ծառայեցէ՛ք իրարու» (Գաղ.
Ե.13): «Աստուծոյ ընտրեալ սուրբերու
եւ սիրելիներու պէս ձեր վրայ հազէ՛ք
գութք, ողորմութիւնը, հեգութիւնը,
երկայնամտութիւնը, իրարու համբեր-
ւով եւ իրարու ներելով՝ եթէ մէկը միւ-
սին դէմ տրտունջ ունենայ: Ինչպէս
Քրիստոս ձեզի ներեց, դուք ալ նոյնը
ըրէ՛ք, եւ այս ամէն բաներու վրայ սէրը
հազէ՛ք, որ կատարելութեան կապն է»
(Կող. Գ.12-14):

Հ ՈԳԵՒՈՐ ՊԱՏ ԳԱՍ

ՉԻ ԲԱԵՐ ՊԻՏՆԱԼ, ՈՐ ԱՍՏՈՒԱԾ ՓՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ

Ընթերցող բարեկամ, կասկածէ վեր է,
որ կը հաւատանք Աստուծոյ գոյութեան,
բայց հաւատալ, որ ան կայ առանց
յարաբերութեան մէջ ըլլալու անոր հետ
ոչինչ կ'օգտ մեզի: Ի՞նչ կ'արժէ հաւա-
տալ որ Յիսուս Փրկիչ է, բայց չանդ-
րադառնալ որ մենք փրկութեան կարօտ
ենք: Ինչո՞վ կ'օգտուինք, եթէ կը հաւա-
տանք, որ Քրիստոս միջնորդն է մարդ-
կութեան մեր երկնաւոր Հօր դիմաց,
բայց չխնդրենք իր միջնորդութիւնը:
Մէկը իր ընկերոջ ըսաւ. «Ես գիտեմ, որ
եթէ վազեմ կը յաղթեմ», ընկերը պա-
տասխանեց. «Այո, ես ալ գիտեմ, որ եթէ
վազես կը յաղթես, բայց այնքան ատեն,
որ չես վազեր յաղթանակ չկայ քեզի
համար»: Աստուծոյ մասին գիտնալը
մեզ յաղթանակի չ'առաջնորդեր, այլ՝
պետք է վազել դէպի անոր, անով
յաղթող դառնալու համար:

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ

«Ինչպէս հողը կ'աճեցնէ այն ինչ,
որ կը սերմանուի իր մէջ, այնպէս ալ,
հողեղէն մարդու բնութիւնը կը պտղա-
բերէ այն ինչ, որ կը սերմանուի իր մէջ՝
ատիկա ըլլայ մեղքի փուշ թէ առաքի-
նութեան ծաղիկ: Հետեւաբար, եկէք
Աստուծոյ պատուիրաններուն սերմա-
հատիկներուն լոյսը ցանենք մեր հոգի-
ներուն մէջ, որպէսզի ամէն տեսակի
բարի ծաղիկներ աճին հոն»:

(Յովհաննէս Երզնկացի)

ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ'ՈՒՉԵՍ...

ԵԹԷ ԿՈՒՉԵՍ ՊԻՏՆԱԼ, ԹԷ ԱՍՏՈՒԱԾ Ի՛ՆՉՊԷՍ ԿԸ ՊԱՇՏՊԱՆԷ ԱՐԿԱՐԸ՝ Կարդա՛ր ԱՎՂԱՄՈՍ 17

Ո՛վ ՏԷՐ, լսէ՛ արդար բողոքս,
մտի՛կ ըրէ աղաղակս, ականջ տուր
աղօթքիս, որ նենգաւոր շրթներէ չի
գար: Դատավճիռս դո՛ւն տուր, տե՛ս
իմ ուղիղ ըլլալս: Դատավճիռս դո՛ւն
տուր, գիշեր ատեն եկար եւ փոր-
ձեցիր սիրտս, կրակով քննեցիր եւ
չարութիւն չգտար մէջս, ո՛չ ալ բերնիս
մէջ անիրաւութիւն: Տեսայ մարդոց
գործերը, բայց քու խօսքիդ հետեւե-
լով՝ հեռու մնացի արիւնահեղ մար-
դոց ապրելակերպէն: Քայլերս քու
շաւիղներուդ մէջ պահէ, որպէսզի
ընթացքս չշեղի: Ես քե՛զ կը կանչեմ,
որովհետեւ գիտեմ, թէ պատասխան
պիտի տաս, ո՛վ Աստուած, ականջդ
ինձի խոնարհեցուր, լսէ՛ խօսքերս:
Մքանչելի կերպով ցոյց տուր քու
սէրդ, դուն՝ որ քեզի ապաւինողները
քու աջովդ կը փրկես իրենց հակա-
ռակորդներէն: Աչքի բիբի պէս պահէ
զիս պահպանէ ամբարիշտներէն՝
որոնք կեանքիս կը սպառնան, մա-
հացու թշնամիներէս՝ որոնք պաշա-
րած են զիս: Իրենց հարստութեան
վստահած, եւ գութը մոռցած՝ ամբար-
տաւանութեամբ կը բանան իրենց
բերանը: Ահա կը հետապնդեն զիս,
եւ զիս պաշարած՝ ակնդէտ կը
հետեւին ինձի, զիս գետին տապա-
լելու համար, առիծի մը պէս՝ որ
կ'ուզէ բզկտել, կորիւնի մը պէս՝ որ
դարան մտած կը սպասէ: Ե՛լ ո՛վ
ՏԷՐ, անունց ճամբան կտրէ, զանոնք
տապալէ՛: Քու սուրովդ կեանքս
փրկէ՛ ամբարիշտներու ձեռքէն: